Ասով չի վերջանար հակամարտութիւնը. երկուստեք կը շարունակեն նամակներ կամ պատուիրակներ ղրկել Էջմիածին, և զիրար մեղադրել (6)։

Խնդիրներն ի սպառ փակելու նպատակաւ, Սսոյ Թորոս Բ. Կաթողիկոսը, որ այն ժամանակ Կ. Պոլիս կը գտնուէր, ժողով կը գումարէ Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ, մասնակցութեամբ Խաչատուր և Թադէոս եպիսկոպոսներուն, Խաչատուր և Մարտիրոս վարդապետներուն, իշխաններուն, քահանաներուն և բազմամբոխ ժողովրդեան (18 Դեկտ. 1656)։ Երեք օր յետոյ, կիրակի, Դեկտեմբեր 21ին, Թորոս Կաթողիկոս, նոյն եկեղեցւոյն մէջ, կը պատմէ Մուղնեցւոյն արարքները, կը նզովէ զայն և անոր համախոհները, Տարաբ-խանաճի Վարդան և Պարմագսուզ Աստուածատուր վարդապետները, կը մեղադրէ Յակոբ Կաթողիկոսը, որ հերձուածող Մուղնեցւոյն ողջոյնի գիր ղրկած է. և կը թելադրէ. «նամակ ղրկենք Կաթողիկոսին մենք և բոլոր վարդապետներս. եթէ չարերը պատժէ, և բարիներուն օրհնութիւն և քաղաքիս մխիթարական թուղթ ուղարկէ, շատ լաւ. այն ատեն իմ մեծ եղբայրս է և աչքերուս լոյսը։ Եթէ դարձեալ յամառի և չարերը գովէ, այսուհետև կը

(6) ԱՆդ, 217։